Ըսպանիոլ «սպանացի. 2. տեսակ մը ոչխար՝, որ յարգի չէ», Թրք. Իսպանիա *ɔspanyol* < իտալ. spagnolo «սպանացի»:

Ըսպէչար «դեղագործ». հին բառ, որ շատ տեղ արդէն փոխանակուած է Թրք. եզանի բառով. < իտալ. spezieria «դեղատուն», որ կազմուած է spezie բառէն. իտալ. z համապատասխան չէ մեր չ ձայնին. բայց որովհետեւ spezie երկրորդաբար կ'ըսուի նաեւ specie, ուստի կրնանք ենթադրել որ spezieria բառն ալ ունենայ *specieria ձեւ մը, թէեւ ասիկա ոչ գրական իտալերէնի եւ ոչ ալ վենետկեան բարբառին մէջ գոյութիւն ունի: Թրք. եւս հին ձեւով կ'ըսուի اسپنچیار *ɔspencyar* «դեղագործ»:

Ըսպորթա «փողոցի վաճառականներու տափակ կողովը» < իտալ. sporta «կողով». — հմմտ. նաեւ Թրք. *ɔsporta*, Ֆրանս. sporte «պրտուէ հիւսուած կողով»:

Ըսվանցիկ «աւստրիական արծաթեայ դրամ մը՝ 2 դրուշ արժողութեամբ» < գերմ. zwanzig «քսան» բառն է, «քսաննոց» իմաստով: Բառս գործածական է եղած Խրիմի պատերազմին ժամանակ, բայց յետոյ տաճկական կառավարութեան կողմէ նոյն դրամը հաւաքուելով՝ նիւթին հետ բառն ալ հիմայ բոլորովին ջնջուած է:

Ըստամփա «թղթէ կամ խաւաքարտէ տիպար՝ որուն վրայէն կը ձեւէն շրջագեստի, հանդերձի, կօշիկի եւն մասերը, patron» < իտալ. stampa «տպագրութիւն, նշան, մամուլ, կաղապար, տեսակ, որակ, օրինակ»:

Ըստասիօն «շոգեկառքի կայարան», Թրք. *ɔstasion* < Ֆրանս. station.

Ըստէֆա «գնտախաղի մէջ գնտակները մղելու յատուկ փայտէ գաւազան. 2. մօտ 30 սանթիմէթր երկարութեամբ կարծր եւ շատ յեղկ գլանաձեւ փայտ մը՝ որով կօշկակարները կօշիկին տակը կամ քովերը տրորելով կը փայլեցնեն. 3. կազմարարներու ոսկորէ բարակ գործիքը՝ որով նորատիպ գրքերու թերթերը կը ծալլեն ու ծալքը կը յղկեն». նոյնը Ակնայ բարբառին մէջ եղած է Խստիֆա «մատի երկայնութեամբ բարակ ոսկր մի ծայրը կպչուն մեղրամոմ, որով աղամանդը իր գեւեղեալ տեղէն դուրս կը քաշեն» (Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 348) < իտալ. stecca «գնդամուղի գաւազան, հովահարի կոթ, թուղթ ծալելու յատուկ ոսկրէ կամ փայտէ կլորմարարական դանակ, կօշկակարի յղկիչ փայտ եւն»:

Ըստօռ «զսպանակով կամ թելով երկող իջնող արեւարգել վարագոյր < Ֆրանս. store.

Ըստօռօփա (մն. սրրօփա, սերօփա) «հատ բիր, կոպալ, մահակ», Թրք. استروپا *istropa* նոյն նշ. անշուշտ օտար է, բայց ճիշտ համապատասխան բառը չեմ գտած. կայ իտալ. stroppa «ուռիի ոստ՝ խաղողի որթերը կապելու համար». նոյն. *strópa* «բիր» ընլ՞կ է թէ փոխառեալ:

Ըստօփէռ «կանգնէ՛, դադա՛ր». շոգենաւներու մէջ գործածուած բանաձեւ է. այսպէս հրման կու տայ նաւապետը մեքենավարին՝ երբ ուզէ շոգենաւը կեցնել. բառը մտած է նաեւ սովորական կեանքի մէջ, թէեւ այս անգամ աւելի կատակի լեզուով. < անգլ. stop here «կանգնէ՛ այստեղ» (stop կանգնիլ եւ here հոս): Նոր բառը իբր ծովային բանաձեւ ընդունուած է նաեւ այլուր. ինչ. Ֆրանս. stop «կանգնէ՛», stopper «մեքենան կանգնեցնել» (բայը):

Ըսփերմաչէթ «կէտի ճարպով պատրաստուած տեսակ մը կարծր մոմ» < իտալ. spermaceti «կէտի ճարպ»:

Ըսփէֆիւլասիօն «առեւտրական շահագործութիւն» < Ֆրանս. spéculation:

Ըսֆանտիլ «ծովին խորութիւնը չափելու գործիք, sonde» < իտալ. scandaglio «ծովաչափ». մեր բառը կ'ենթադրէ *scandiglio երկրորդական ձեւ մը, որ իրօք գոյութիւն ունեցած ըլլալու է, քանի որ բայը կ'ըսուի հաւասարապէս scandagliare կամ scandigliare «ծովին խորութիւնը չափել sonder»:

Ըսֆառմօզ «նաւակին կողերուն վրայ ցցուած մատնաձեւ փայտիկներ, որոնց կը կապեն թիերը, Ֆրանս. tollet, Նոր-Բայազիտի հայոց դաւառականով՝ թեւ». < իտալ. scarmo, որ յունարէնի մէջ -os վերջաւորութիւնը ստանալէ յետոյ թուրքերէնի միջոցով անցած է մեզի:

Ըսֆօլաթուրա «վղարեկոր. զգեստին վիզը պատրաստելու համար ազեղնաձեւ կտրուած մասը» < իտալ. scollatura:

Ըսֆօնթօ «զեղչ», Թրք. اسقونطو *ɔskonto*, Ֆրանս. escompte < իտալ. sconto:

(Շարունակելի:)

Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՔԵՐՈՎԲԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ ԴՈՐԲԱՏՈՒՄ

(Շարունակութիւն:)

Անթերի ցանկը Դորպատի Համալսարանի ուսանողներէ, առաջին օրերէց իսկ, պարունակում է, 1802 թ. մինչեւ 1889 թ., շուրջ մէկ եւ կէս տասնեակ հազար անուններ, դրանց թւում նաեւ՝ քառասուն հայ ուսանողների անուններ:

Ամէն մի ուսանողի մասին գրի են առնուած, արձանագրման օրն իսկ, մի քանի անհրաժեշտ տուեալներ՝ որպէս պատասխան ընդհանուր եւ միատեսակ հիմնական հարցումների:

Զեռագիր Մայր Մատեանի մէջ (հատոր II) Քերովբէ Պատկանեանի մասին գըտնում ենք հետեւեալ տուեալները.

1. Արձանագրման թիւը — 5695:

2. Ուսանողի անունը — Քերովբէ Պատկանեանց, Լազարեան ճեմարանից:

3. Ծննդեան տարին եւ օրը — 4 մայիսի 1833: Հայ-Լուսաւորչական:

4. Ծննդեան վայրը — (Նոր-)Նախիջեւան:

5. Ծնողների կամ խնամակալների անունները, գիրքը եւ յայտարար նշանը — Պետրոս քահանայ: — Աննա, ծնեալ Ալամդարեանց:

6. Ծնողների կամ խնամակալների բնակավայրը — Ստաւրոպոլ:

7. Ո՞ր Ֆակուլտետում է արձանագրուած — Պետատնտեսագիտական (Cameralia):

8. Արձանագրման (Immatriculation) թուականը — 19 յունուարի 1851:

9. Ե՞րբ է թողած համալսարանը — 1852 թ. սեպտ. 9: Ընդհանուր վկայթուղթ՝ 3 յուլիսի 1853, թիւ 1200:

10. Ջնջումն անուան (ուսանողների ցանկից), պատիժ կամ հեռացում: — Պարապ է թողուած պատասխանի տեղը:

11. Ե՞րբ է վերընդունուած համալսարան: — Պարապ է թողուած պատասխանի տեղը[14]:

Այժմ առաջ բերենք Բ. Պատկանեանի Թղթածրարի ցանկը: Այդ Թղթածրարի սկիզբը ասուած է. «Բովանդակութեան ցանկ՝ Քերովբէ Պատկանեանցին վերաբերեալ գործերի»: Տակը կարդում ենք հետեւեալ մակագրութիւնը. «Վերոյիշեալ փաստաթղթերը ստացայ 9 սեպտ. 1852»: Ստորագրութիւն՝ Քերովբէ Պատկանեանց[15]:

Թղթածրարի մէջ սկզբնապէս եղած եւ համալսարանը թողնելիս Պատկանեանի յետ վերցրած այդ փաստաթղթերը, ինչպէս տեսնում ենք Բովանդակութեան Ցանկից եւ որոնց մասին համալսարանի վարչութեան կողմից ասուած է, ըստ սովորականին, «Վկայականներ, որ ներկայացուել են ուսանողների շարքը ընդունուելու առթիւ», հետեւեալները եղած են.

1. Վկայական՝ տրուած Աստրախանի կոնսիստորիայի[16] կողմից[17], 6 յունուարի 1842, Թիւ 18:

2. Վկայական՝ տրուած Լազարեան ճեմարանի Հոգաբարձուի կողմից, 22 յուլիսի 1849, Թիւ 171:

3. Թոյլտուութեան գիր Պատկանեան քահանայի[18]:

4. Բարեյուսութեան վկայական՝ տրուած Դորպատի ոստիկանապետի կողմից[19], 13 յունուարի 1851, Թիւ 243:

5. Վկայական՝ տրուած Լազարեան ճեմարանի վերատեսչի[20] կողմից, 21 մարտի 1850, Թիւ 176:

Այդ փաստաթղթերից զատ, որ սկզբնապէս եղած են Բ. Պատկանեանի Թղթածրարում եւ ապա յետ առնուած, «Բովանդակութեան Ցանկ»ի մէջ նշանակուած է եւ մի վեցերորդ գրութիւն, որ մնում է Թղթածրարում, քանի որ Համալսարանի ներքին գործերին է վերաբերում. այն է՝ «Արձանա-

[14] Այդ նշանակում է՝ Բ. Պատկանեան ուսանող եղած ժամանակ որեւէ պատժի չէ ենթարկուած, անունը չէ ջնջուած ուսանողական ցանկից եւ չէ հեռացուած կամ վերընդունուած համալսարան:

[15] Թղթածրարի մէջ ամէն տեղ նշանակուած ենք գտնում Cherubim Patkanianz կամ Patcanianz անունաձեւը: Ինքն եւս ստորագրում է՝ Cherubim Patcanianz:

[16] «Կոնսիստորիա» էին կոչում ցարական կառավարութեան օրով Հայոց թեմական հոգեւոր ատեանները: Աստրախանը կազմում էր Ռուսաստանի Հայոց թեմերից մէկը եւ ունէր իր կոնսիստորիան կամ հոգեւոր ատեանը:

[17] Ցայտնապէս՝ ծննդեան վկայական Բ. Պատկանեանի:

[18] Ամէն մի նորեկ ուսանող պարտաւոր էր ներկայացնել նաեւ յատուկ թոյլտուութեան գիր իր ծնողների (եւ կամ խնամակալների) կողմից առ այն, թէ վերջիններս համաձայն են որ նա մտնի համալսարան:

[19] Ամէն մի նորեկ ուսանող պարտաւոր էր դարձեալ՝ ոստիկանութիւնից եւս ստանալ ու համալսարանի վարչութեան ներկայացնել քաղաքական բարեյուսութեան վկայական, որից երեւում որ նա հակակառավարական ընթացքի մէջ չէ եղած:

[20] Անշուշտ՝ ուսման վկայական:

© National Library of Armenia

գրութիւն հարցաքննման (Քերովբէ Պատկանեանի), նրան ուսանողների շարքն ընդունելու համար» (տե՛ս վերը)։

Թղթածրարի մէջ պահւում են, բացի վերոյիշեալից, եւս հինգ գրութիւններ։

9.

Բուն իսկ արձանագրուած, իսկական ուսանող ընդունուելու համար՝ Համալսարան ներկայացող ամէն մի նորեկ պարտաւոր էր որոշ առարկաներից քննութիւն տալ պրոֆեսորներից բաղկացած Քննիչ Յանձնաժողովի մօտ։ Նոյն այդ կարգին ենթարկւում է, ի հարկէ, նաեւ Քերովբէ Պատկանեան։

Վերջինիս քննութեան առթիւ կազմուած արձանագրութեան մէջ, որ պահուած է Պատկանեանի Թղթածրարում, ասուած է թէ՝ Պետատնտեսական գիտութիւններ (Cameralwissenschaften) իրեն համար որպէս մասնաճիւղ ընտրած ու քննութեան ենթարկուած Քերովբէ Պատկանեան ցոյց է տուած հետեւեալ յառաջադիմութիւնը.

1. Յունարէնից չէ քննուած[21]։
2. Լատիներէն. բանաւոր՝ լաւ, գրաւոր՝ բաւարար, ընդհանուր՝ լաւ (II)։
3. Մաթեմատիկ. բանաւոր՝ բաւարար, գրաւոր՝ անբաւարար ընդհանուր՝ բաւարար (III)։
4. Պատմութիւն՝ լաւ, Աշխարհագրութիւն՝ շատ լաւ. ընդհանուր՝ լաւ (II)։
5. Ռուսերէն. բանաւոր՝ շատ լաւ, գրաւոր՝ շատ լաւ, ընդհանուր՝ շատ լաւ (I)։
6. Գերմաներէն շարադրութիւն՝ լաւ։ Ընդհանուր՝ լաւ (II)։

Արձանագրութեան տակ կարդում ենք քննող պրոֆեսորների ստորագրութիւնները — Հաֆներ (Haffner), Քրուզէ (Kruse), Ռոզբերգ (Rosberg), Հէն (Hehn), Մինդինգ (Minding) եւ այլն։ Աւելի վարը մակագրուած է. «Քննիչ Կոմիտէի վկայագիր, 17 յունուարի 1851, Թիւ 1485 (Խորհուրդի՝ ?) Թիւ 43»։

«Վարչական գրանցում Ք. Պատկանեանի մասին» էջի վրայ ընդամէնը երեք տող ենք գտնում արձանագրուած, ուր ասուած է. «Դիտողութիւններ ու նշումներ։ Դորպատի Համալսարանի Արձանագրմանց Մայր Մատեանում (Album Stud. Acad. Dorp.) նշանակուած է որպէս Պետատնտեսական գիտութիւնների ուսանող. 19 յունուարի 1851, Թիւ 5695։

Ինչպէս ամէն մի ուսանող, այդպէս եւ Ք. Պատկանեան ունեցել է իր «ուսանողական դասախօսութեանց թերթը» (Anmeldebogen), որ պահուած է Թղթածրարում։ Այդ թերթի մէջ, ուր նշանակուած են իր անուն-ազգանունը, որտեղացի լինելը[22], արձանագրման թիւը, եւ յաճախած Ֆակուլտետը, մի առ մի արձանագրուած է նաեւ, թէ ո՛ր կիսամեակին ի՛նչ առարկաներ է լսած նա, ո՛ր պրոֆեսորի մօտ, ու ի՛նչ յառաջադիմութիւն է ցոյց տուած։

Այդ տեղից տեսնում ենք՝ Դորպատի Համալսարանի Պետատնտեսական մասնաճիւղին իբրեւ 5695րդ արձանագրուած ուսանող Քերովբէ Պատկանեան, որ համալսարան է մտած 1851 թ. յունուար 19ին, դասախօսութեանց գրուած է եղել ընդամենը չորս կիսամեակ, այն է՝ 1851 թ. առաջին եւ երկրորդ ու 1852 թ. նմանապէս առաջին եւ երկրորդ կիսամեակներին։

1851 թ. առաջին կիսամեակին Պատկանեան լսած է հետեւեալ դասախօսութիւնները։ 1. Տրամաբանութիւն՝ Շտրիւմպելի (Strümpel) մօտ։ 2. Ռուս. պատմութիւն՝ Քրուզէի[23] մօտ։ 3. Ընդհանուր Աշխարհագրութիւն՝ Բլումի[23] (Blum) մօտ։ 4. Վերծանում ռուս բանաստեղծների՝ Ռոզբերգի[23] մօտ։

1851 թ. երկրորդ կիսամեակին լսած է. 1. Ռուս. պատմութիւն (Քրուզէ)։ 2. Հանրագիտութիւն անտեսագիտութեան՝ Ֆրիդլենդերի (Friedländer) մօտ[23]։ 3. Վերծանում ռուս բանաստեղծների (Ռոզբերգ)։ 4. Ֆիզիկ, II. մաս (Քեմց՝ Kämtz)։

1852 թ. առաջին կիսամեակին Ք. Պատկանեան լսած է հետեւեալ առարկաները.

1. Քաղաքատնտեսութիւն (Ֆրիդլենդեր)։ 2. Ռուս. լեզու (Ռոզբերգ)։ 3. Ֆիզիկ I. մաս (Քեմց)։ 4. Անտառագիտութիւն (Փուցոլդ՝ Putzold)։

1852 թ. երկրորդ սեմեստրին լսած է. 1. Արուեստարանութիւն (Technologie) Փուցոլդի մօտ։ 2. Ռուս. գրական. պատմութիւն (Ռոզբերգ)։ 3. Քաղաքատնտեսութիւն (Ֆրիդլենդեր)։ 4. Ընդհ. պատմութիւն (Քրուզէ)։

1851 թ. առաջին կիսամեակին Շտրիւմպել, որի մօտ Տրամաբանութիւն է լսած Պատկանեան, վերջինիս ուսանողական դասախօսութեանց թերթի համապատասխան սիւնակի մէջ մակագրած է. «Շատ ջանասիրութեամբ յաճախած»։ Միւս դասախօսները մակագրած են՝ «ջանասիրութեամբ յաճախած» եւ կամ պարզապէս՝ «յաճախած», «լսած»։

10.

Ք. Պատկանեանի Թղթածրարի յաջորդ փաստաթուղթը մի ռուսերէն խնդրագիր է, որ ուսանողի հայրը՝ «Ստաւրոպոլի եւ Կուբանի հայ եկեղեցիների գործակալ քահանայ» Տէր-Պետրոս Պատկանեան ներկայացրած է Համալսարանի ռեկտոր Պրոֆ. Հաֆներին։ Խնդրագիրը, Ստաւրոպոլ Կովկասեան, յունիս 1853 թուականի, ստորագրուած է Գործակալ քահանայ Տ. Պետրոս Պատկանեանցի կողմից եւ ունի հետեւեալ բովանդակութիւնը։

«Անցեալ 1852 թուականին ես խնդրով դիմեցի Զերդ Գերազանցութեան՝ Դորպատի Համալսարանի ուսանողների ցանկից ընտանեկան պատճառներով հանելու իմ որդի Քերովբէ Պատկանեանցին։

Արդ, ընդ սմին յղելով որդուս ուսանողական դասախօսութեանց թերթը (Anmeldebogen), ամենախոնարհաբար խնդրում եմ Զերդ Գերազանցութեան՝ տալ նրան մի վկայական իր հեռանալու ու Զերդ Գերազանցութեան վստահուած համալսարանում իր ուսման տեւողութեան ընթացքում ցոյց տուած յառաջադիմութեան մասին եւ ուղարկել ինձ այն, որով եւ վիճակի կը լինի նա՝ մտնելու քաղաքացիական ծառայութեան մէջ։ Վասն զի, առանց պատկան վկայականի նա կարող չէ ծառայութեան մէջ ընդունուել»։

Նոյն 1853 թ. յուլիս 3 թուակիր մի վկայագիր է Թղթածրարի յաջորդ փաստաթուղթը, Թիւ 1200 գրութիւն Դորպատի Համալսարանի Խորհուրդի, տրուած «Դորպատի կայսերական համալսարանի նախկին ուսանող Պետատնտեսագիտութեան Քերովբէ Պատկանեանցի մասին» առ այն, թէ նա, Քերովբէ Պատկանեան[24], քահանայի որդի, «1851 թ. առաջին կիսամեակի սկզբից մինչեւ 1852 թ. սեպտ. 9, որ օրը նա սեփական կամքով թողել է համալսարանս, գտնուել է ուսանողների շարքի մէջ»։ Շարունակութեան մէջ ասուած է՝ թէ «համաձայն իր ուսանողական դասախօսութեանց թերթ»ի, ի՛նչ դասախօսութիւններ է յաճախած, «ջանասիրութեամբ», նախկին ուսանող Ք. Պատկանեան։ Ու հետեւում է թւումը այն առարկաների, որ առաջ բերինք վերը, առնելով միայն բուն իսկ «ուսանողական դասախօսութեանց թերթ»ից։

Համալսարանի տուած վկայագրի շարունակութեան մէջ ասուած է. «Միեւնոյն ժամանակ դիտում է ըստ կանոնի, որ պարոն Քերովբէ Պատկանեանց աւարտական քննութիւն (Gradualexamen) չէ տուած։ Այդ պատճառով եւ նրան չեն կարող վերապահուել այն իրաւունքները, որ (Կայսեր կողմից) ամենաողորմածարար շնորհուած են (Համալսարանիս) դասընթացքն աւարտած ու յաջող քննութեամբ համալսարանական աստիճանի արժանացած անձերին՝ քաղաքացիական ծառայութեան մէջ մտնելիս։ Եւ սակայն, քանի որ տեղւոյս համալսարանում եղած ժամանակ իր վարքն ու բարքը, համաձայն համալսարանիս դատարանի բարուց մատեանի տուեալների, լաւ եղած է, ուստի եւ վերապահուած է նրան իրաւունք՝ քաղաքացիական ծառայութեան մէջ մտնելիս պաշտօնեաների երկրորդ դասի մէջ հաշուբուելու»։ (Պետական Օրէնքների Ժողովածու հրատար. 1842, հատոր III, Կանոնագրութիւն կառավարութեան կողմից ծառայութեան կոչելու մասին՝ յօդուած 590)։

Վկայագրի տակ մակագրուած է.

«Պատրաստեց՝ (Ստորագրութիւն) Տոբիէն (Tobien)։

---

[21] Յունարէնից քննութիւն տալ պարտաւոր էին համալսարանի պատմաբանասիրական եւ ասուածաբանական ֆակուլտետները մտնող ուսանողները միայն։ Ս. Նազարեան, օրինակ, քննուել է նաեւ յունարէնից։ Լատիներէն լեզուի քննութիւնը պարտադիր եղած է միւս ֆակուլտետները մտնողների համար եւս, անխտիր։

[22] Այդտեղ, Ք. Պատկանեանի «ուսանողական դասախօսութեանց թերթ»ի մէջ, նրա մասին ասուած է՝ «Անդրկովկասցի»։ Ակներեւաբար զբէի սխալ, չփոթութեան արդիւնք միայն։ Համալսարանի վարչութեան գրանցող պաշտօնեան չփոթել է, երեւում է, Հարաւային Ռուսաստանի Նոր-Նախիջեւան քաղաքը Հին-Նախիջեւանի հետ, որ Անդրկովկասում է գտնուում։ Ուղիղ ձեւով է արձանագրուած — Նոր-Նախիջեւան — Ք. Պատկանեանի ծննդավայրի անունը Album Academicumի մէջ։

[23] Քրուզէ, Բլում, Ռոզբերգ եւ Ֆրիդլենդեր եղած են ուսուցիչները նաեւ Ս. Նազարեանի։ Ֆրիդլենդեր դաս է տուած Խաչատուր Աբովեանին եւս, որ իր դպրոցական Ցիչատակարանի մէջ առանձին երախտագիտութեամբ է յիշում նրա անունը։

[24] Այստեղ եւս Ք. Պատկանեան սխալմամբ «Անդրկովկասցի» է նշանակուած։ Հմմտ. վերը՝ ծան. 22։

© National Library of Armenia

Բ· Պատկանեանի Թղթածրարի յաջորդ ու վերջին փաստաթուղթը, գրուած ռուսերէն լեզուով, ունի միեւնոյն բովանդակութիւնը ու կրում է միեւնոյն թուականը (3 յուլիս 1853) եւ միեւնոյն համարը (1200), ինչ որ՝ նախորդը (գերմաներէն լեզուով)։ Ամբողջ վկայաթուղթը բաղկացած է մի թերթ (in folio) երկթերթից (չորս էջ), որի առաջին եւ երկրորդ էջերում գերմաներէն տեքստն է գրուած, իսկ երրորդ եւ չորրորդ էջերում՝ ռուսերէնը։ Միայն գերմաներէն բնագիրն է կրում ստորագրութիւնը (Tobien)։

Այդպիսի վկայագիր, ինչպէս վերինն է, տրւում էր ամէն մի ուսանողի, որ թողնում էր համալսարանը· անկախ այն բանից, թէ նա աւարտական քննութեանց պիտի ներկայանա՞ր թէ ոչ։ Մի պարզ վկայաթուղթ ուրեմն այն մասին, թէ տուեալ ուսանողը ո՛ր կիսամեակին ի՞նչ առարկաներ է լսած եւ՝ ի՞նչ կանոնաւորութեամբ։ Բերովբէ Պատկանեան եւս, որ, ինչպէս տեսանք, չէ աւարտած Դորպատի Համալսարանը, վերջինիս վարչութիւնից ստացած է մի այդպիսի վկայաթուղթ։

11·

Տեսնում ենք ուրեմն՝ Բերովբէ Պատկանեան Դորպատի Համալսարանի ուսանողների շարքն է մտնում 1851 թ· յունուար ամսին, այսինքն՝ ոչ իսկ 18 տարին լրացած։ Համալսարանը թողնում է նա 1852 թ· սեպտեմբեր ամսին, ոչ իսկ 19½ տարին բոլորած։ Թէեւ, իր «ուսանողական դասախօսութեանց թերթ»ին նայելով, նա իր չորրորդ կիսամեակին եւս ուսանողների շարքում եղած է, եւ սակայն՝ կիսամեակը (չորրորդ) դեռ նոր սկսած, թողնում է դասախօսութիւնները եւ համալսարանը առ հասարակ ու Պետերբուրգ վերադառնում։

Դարձեալ, Բ· Պատկանեանի «ուսանողական դասախօսութեանց թերթ»ից տեսանք մենք, — թէ ի՛նչ դասախօսութիւններ է լսած նա եւ ի՛նչ գիտութիւնների հետեւած — Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Գրականութիւն, Քաղաքաքանաչութիւն, Տրամաբանութիւն եւայլն։ Այսինքն՝ գլխաւորաբար ոգեկան կամ հումանիտար գիտութիւններ։ Ուրիշ խօսքով՝ քիչ բացառութեամբ՝ գրեթէ նոյն այն գիտութիւնները, որ այն ժամանակները առանձնում էին Դորպատի Համալսարանի պատմա-բանասիրական Ֆակուլտետում ու որոնք հետագային եւս առանձնուել են առհասարակ գերման համալսարանների փիլիսոփայական Ֆակուլտետի պատմա-բանասիրական ենթաբաժնում։ Ս· Նազարեան, օրինակ, լինելով 1835—1840 թ· Դորպատի Համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի պատմա-բանասիրական ենթաբաժնի ուսանող, հետեւած է առաւելապէս նոյն այն գիտութիւններին, ինչ որ իրենից 16—18 տարիներ յետոյ՝ նոյն համալսարանի ֆիզիկո-մաթեմատ· ֆակուլտետի արհեստագիտական-տնտեսական ենթաբաժնի ուսանող Բ· Պատկանեան (եւ ուրիշներ)։

Նկատենք այստեղ, որ մինչեւ 1850 թ· Դորպատի Համալսարանի փիլիսոփայական Ֆակուլտետը ունէր հետեւեալ չորս ենթաբաժինները· 1· փիլիսոփայական եւ մաթեմատ· գիտութեանց, 2· բնագիտական, 3· բանասիրական (ֆիլոլոգիական)-պատմական, 4· արհեստագիտական (տեխնոլոգիական)-տնտեսական գիտութեանց ենթաբաժիններ։

1850 թ· փիլիսոփայական ֆակուլտետը բաժանուել է երկու ինքնուրոյն ֆակուլտետների· I. Պատմա-բանասիրական եւ II. Ֆիզիկո-մաթեմատ· ֆակուլտետներ։ Իր հերթին՝ պատմա-բանասիրական ֆակուլտետը ունեցել է հետեւեալ երկու ենթաբաժինները· 1· փիլիսոփայական-մաթեմատ· եւ 2· բանասիրական-պատմական, իսկ Ֆիզ·-մաթեմ· ֆակուլտետը՝ 1· բնական գիտութեանց եւ 2· արհեստագիտական (տեխնոլոգ·) — տնտեսագիտական ենթաբաժին։ Այս վերջին՝ Cameralia, այսինքն Պետատնտեսագիտական ենթաբաժինն են յաճախած ահա Բ· Պատկանեան եւ մի շարք ուրիշ հայ ուսանողներ։ Այդ ենթաբաժինը — Cameralia — երբեմնապէս, մինչեւ իսկ պաշտօնական գրութիւնների մէջ, յիշատակւում է որպէս մի ինքնուրոյն ֆակուլտետ։

Այսպէս կամ այնպէս, Բ· Պատկանեան Դորպատի համալսարանում հետեւում է այն հիմնական գիտութիւններին, որ յետոյ եւս շարունակում են մնալ նրա համար գիտական հետաքրքրութեան գլխաւոր առարկաներ — պատմութիւն, գրականութիւն, լեզու։ Բ· Պատկանեան իր գիտական ասպարէզի սկիզբը այսպիսով Դորպատում է դրել եւ մանաւանդ այնտեղ է իւրացնում գերման գիտականութեան ոգին ու մեթոդը։

Մի հարց մնում է սակայն դեռ չպարզուած։ Բ· Պատկանեան գիտնական աշխարհին ծանօթ է որպէս հայագէտ, բայց նաեւ՝ արեւելագէտ, իրանագէտ։ Արդ, ո՞րտեղ է նա մասնագիտօրէն ուսել այդ գիտութիւնները եւ ո՞ւմ մօտ։

Դորպատի համալսարանում, այդ գիտենք մենք, չեն աւանդուել արեւելեան լեզուներ· իսկ հայերէնի ուսուցման մասին այնտեղ՝ խօսք լինել չէր կարող, ի հարկէ։ Արեւելեան լեզուներից միայն երրայեցերէնն է աւանդուել այնտեղ, այն եւս՝ աստուածաբանական ֆակուլտետում։ Բ· Պատկանեանի «ուսանողական» դասախօսութեանց թերթի մէջ եւս, տեսանք, որ եւ է արեւելեան լեզուի յիշատակութեան հետքն անգամ չկայ։ Եւ չէր կարող լինել, քանի որ, ասացինք, համալսարանի ծրագրում տեղ չէին գրաւում արեւելեան լեզուները։ Պարագան նոյնն է եղած նաեւ, Բ· Պատկանեանից առաջ, նոյն համալսարանի ուսանող եւ հետագային «արեւելեան լեզուաց վարդապետ» (դոկտոր) Ս· Նազարեանի համար։

Հարց է, ասում ենք, ո՞րտեղ, ե՞րբ եւ ո՞ւմ մօտ է մասնագիտօրէն սովորել արեւելեան լեզուները Բ· Պատկանեան։

Դորպատ թողնելուց (1852 թ·) եւ այնուհետեւ մէկ տարի Սուրբ Պետերբուրգի գիմնազիան յաճախելուց ու աւարտելուց յետոյ, նա, տեսանք, 1853—1857 թ· յաճախել է Պետերբուրգի Մանկավարժական բարձրագոյն Ինստիտուտի պատմագիտական բաժինը եւ յաջողութեամբ աւարտել այն։

Արեւելեան լեզուներ այնտեղ չէին աւանդում, ի հարկէ։ Ապա, 1857/1858 ուս· տարում նա անց է կացրել Թիֆլիսում որպէս ուսուցիչ եւ յետոյ կրկին Պետերբուրգ մեկնել 1858ին։ 1860ին լոյս է տեսնել Բ· Պատկանեանի գիտական երախայրիքը՝ նուիրուած հայ գրականութեան մատենագիտութեան։ Նոյն այդ թուականին նա Եւրոպա է ճամբորդել· իսկ յաջորդ տարին արդէն, 1861 թ·, գրաւել է Ռուսիոյ մայրաքաղաքի համալսարանում հայագիտութեան ամբիոնը։

1858 թ·ից յետոյ, երբ Բ· Պատկանեան վերջնապէս Պետերբուրգ հաստատուեցաւ եւ իր ընտանեկան յարկը հիմնեց ու նիւթական ապահով վիճակ ունեցաւ, նոյն այդ ժամանակից սկսած, տեսանք, նա ինքզինքը գիտութեանց նուիրից եւ աւելի ու աւելի հմտացաւ նրանցում։ Ահա այդ տարիներին է, 1858—1861 թ·, որ Բ· Պատկանեան ուսած պիտի լինի նաեւ արեւելագիտութիւն։ Հայերէն նա բաւականաչափ ուսել էր Լազարեան ճեմարանում ու դիւրաւ ի վիճակի էր ինքնուրոյն կերպով, անկախաբար խորանալու հայ լեզուի եւ բանասիրութեան մէջ։

Պարագան արդեօք նո՞յնն է եղած նաեւ արեւելագիտութեան ու մասնաւորապէս իրանագիտութեան վերաբերմամբ, թէ ուներցած է նա ուսուցիչ-առաջնորդներ այդ մարզում, — այդ մասին մեզ պակասում են տեղեկութիւններ։ Արդեօք այդ տարիները եւ կամ աւելի առաջ Բ· Պատկանեան չէ՞ յաճախած Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական ֆակուլտետը, ուր յետոյ նա ինքն արդէն ամբիոն պիտի գրաւէր, — ոչինչ չգիտենք այդ մասին։

Բոլոր պարագաների տակ, խիստ հետաքրքրական են Պատկանեանի կեանքի այդ տարիները եւ արժանի՝ մանաւոր հետազօտութեան։ Բաղձալի է որ պրպտումներ կատարուին Պետերբուրգի Մանկավարժական Ինստիտուտ եւ մանաւանդ նոյն քաղաքի համալսարանի դիւաններում, Բ· Պատկանեանի պետերբուրգեան տարիներին աւելի մօտուց ծանօթանալու համար։ Անշուշտ, մեծ հետաքրքրութիւն պիտի ներկայացնէին հայագէտի անհատական դիւանն ու նամակներն եւս, եթէ երբեք պահուած են նրանք։

12·

Բերովբէ Պատկանեանի օրով, 1851—1852 թուականներին, Դորպատի Համալսարանը իր յարկի տակ հաշուում էր ոչ պակաս քան 13 հայ ուսանող։ Նրանց մէջ ստեղծուած էր ընկերական սերտ կապ, մտերմական ջերմ մթնոլորտ։

Այդ պատանիները կազմում էին, քով քովի եկած, մի տեսակ ազգային կենդանի համայնք, հոգեւոր փոքրիկ Հայաստան՝ հեռաւոր Հիւսիսի այդ նշանաւոր քաղաքում։

Նրանցից ոմանք արդէն իսկ կապուած էին իրար հետ ընկերական կապերով դեռ Լազարեան ճեմարանից, որի յարկի տակ նրանք միասնաբար կրթութիւն էին ստացած։ Դորպատի հայ ուսանողները, բոլորն էլ վառվռուն երիտասարդներ, գրեթէ պատանիներ, տոգորուած էին գաղափարական ձգտումներով, ապրում էին հայրենիքի ու ազգի սիրով, տարուած էին հայրենասիրական իդէալներով։ Ընկերական կեանքը, մտքերի եւ զա-

© National Library of Armenia

զափարների չփումը ջերմ մթնոլորտ էին ստեղծել նրանց շարքերում: Ժամանակի ոգին, գերման շրջապատը, նոր իդեալները ոգեւորութեան մի-մի աղբիւր էին նրանց ամենի համար: Ու այդ պատանիները Դորպատ էին եկած՝ գերման գիտութեան ու Եւրոպական մշակոյթի գէնքով զինուելու, մի «նոր առաղանի մէջ վերամկրտուելու» եւ, որպէս այդպիսիք, ազգի ու հայրենիքի ծառայութեան նուիրուելու հաստատուն ուխտ արած իրենց սրտում: Ինչ խօսք, որ Աբովեանի ու Նազարեանի օրինակներն եւս ոգեւորութեան անսպառ աղբիւրներ էին նրանց համար, մի-մի առաջնորդող փայլուն աստղ:

Բարեբախտաբար, մեզ որոշ տեղեկութիւններ հասած են դորպատեան հայ ուսանողների անհատական ու ընկերական կեանքի մասին: Գոհ պիտի լինինք շատ ու երախտապարտ, որ մէկ-երկուսը նրանցից մեծապէս գնահատելի գործ են կատարած՝ յետագային գրի անցընելով իրենց դորպատեան յիշողութիւնները: Մասնաւոր շահեկանութիւն ներկայացնում են մանաւանդ Յիշողութիւնները Ալեքսանդր Ռոտինեանի [25], որ ուսանող եղած է Դորպատի Համալսարանում 1852 թ. յունուար ամսից մինչեւ 1856 թ.: Նա եւս եկած էր Լազարեան Ճեմարանից ու Դորպատում հետեւում էր տնտեսական գիտութեանց: Ալ. Ռոտինեանի Յիշողութիւնները, թէեւ հակիրճ, բովանդակալից են ու պարունակում են տեղեկութիւններ ոչ միայն Դորպատի հայ ուսանողութեան մասին ընդհանրապէս, այլ միեւնոյն ժամանակ մեզ տալիս են ծանօթութիւններ իւրաքանչիւր մէկ ուսանողի մասին առանձին:

Քերովբէ Պատկանեանի մասին, որ մեզ մանաւորապէս հետաքրքրում է այս կապակցութեան մէջ, Ալ. Ռոտինեանից լսում ենք խիստ շահեկան տեղեկութիւններ: «Իմ ժամանակակից հայ ուսանողներից», ասում է նա, «Հայոց լեզուին քաջ տեղեակ էին՝ Սիմէոնեանց, Պատկանեանք՝ Քերովբէ եւ Ռափայէլ, եւ մասամբ Մ. Փրիզոնեանց եւ Դոդոխեանց»:

Քերովբէ Պատկանեան, գիտում է Ալ. Ռոտինեան, «որ գիտնական աշխարհում հռչակուած է իւր նշանաւոր երկերով եւ մանրակրկիտ քննական հանճարով, Դորպատում իւր վրայ առանձին մի ուշադրութիւն չէր դարձնում, թէեւ երեւում էր որ ձիրքերով օժտուած է»: Ռոտինեանի վրայ Ք. Պատկանեան թողել է «ուշիմ, աչքաբաց» ուսանողի տպաւորութիւն, մանաւանդ՝ իրրեւ «զարմանալի յիշողութեան տէր» մէկը, որ «մեծ հեշտութեամբ ամէն բան սովորում էր»: Այսպէս, շարունակում է նա «իմ լաւին լեզուի վարժապետը, Շէօնրոկ, մի անգամ խօսելով ուսանող Քերովբէի մասին այն միտը յայտնեց ինձ, որ բոլոր հայերի մէջ, որոնց նա դասեր է տուել, լաւագոյն նրան է համարում: Դժուար սերունները այնպէս յաջողակ մեկնում էր, որ ինձ միանգամայն զարմացնում էր, մինչեւ անգամ նախանձս շարժում»:

Դարձեալ. «Ամէն բան սրամտութեամբ ըմբռնելով, լայն ասպարէզ պարելով իւր գործունէութեան համար, սիրում էր (Ք. Պատկանեան) լուրջ գրքեր կարդալ, սիրում էր բանի մէջ խորասուզուել եւ լաւագոյն ըմբռնում էր կարդացած գրեանց իմաստը»: Ու Ք. Պատկանեանի սիրած մատեանների թուին է պատկանել նաեւ՝ դորպատեան հայ ուսանողութեան ռահվիրայ Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն: Վերջինս, գեռ ձեռագիր վիճակի մէջ, Դորպատ էր տարել իր հետ հեղինակի ձեռնատուն աշակերտ Գէորգ Աֆիմեանց, ինչպէս պատմում է մեզ սա ինքը իր Յիշողութիւնների մէջ: Ալ. Ռոտինեան եւս այդ առթիւ նկատում է. Աբովեանի «Վէրք Հայաստան»ին, որ նա (Ք. Պատկանեան) շատ գեղեցիկ եղանակով կարդում էր, գրեթէ անգիր գիտէր գեռ այն ժամանակ, երբ տպած չէր, եւ իբրեւ ձեռագիր Գ. Հաքիմեանցը բերել էր Դորպատ՝ կորուստից ազատելու համար»: «Վէրք Հայաստան»ին, յայտնի է, այդպէս էլ, այսինքն ձեռագիր վիճակում իսկ, կատարեալ յեղաշրջում է առաջ բերել դորպատեան հայ ուսանողութեան շարքերում:

13·

Ի՞նչպէս էր ուսանող Քերովբէ Պատկանեան ընկերական կեանքում, ընկարագրի ի՞նչ գծեր ունէր նա: Այդ մասին եւս հակիրճ տուեալներ ենք գտնում մենք Ալ. Ռոտինեանի Յիշողութիւնների մէջ:

«Ընկերութիւն շատ էր յարգում եւ ընկերներ ճարելու հետամուտ էր», գրում է նա Քերովբէ Պատկանեանի մասին: «Հայոց

[25] Տե՛ս ծանօթ. 10, 11:

նեղ շրջանը նրան բաւարարութիւն չէր տալիս, եւ այս էր պատճառը, որ նա ուրախ սրտով մասնակցում էր եւ գերմանացւոց կոմերծներին (ուսանողական ընկերութեանց հաւաքոյթներ), ուր նա՝ իւր վարմունքով եւ համերաշխ դիտումներով համակրելի էր եւ պատուական տեղ էր գրաւել»:

Իր աշխարհայեացքով՝ ուսանող ժամանակ Քերովբէ Պատկանեան եղած է, ըստ երեւութին բաւական արմատական: «Յոռետես լինելով», ասում է Ռոտինեան, «նա միշտ ծաղրում էր խոհեմ պահպանողական կուսակցութիւնը եւ ստեղծում էր նոր իդեալներ կեանքի համար, որ յետոյ ինքն էլ անիրագործելի էր համարում»: Ու այդ է եղած պատճառը, որ «թէեւ որոշուած էր որ նա կուսակրօն պիտի դառնար, բայց ինքը եկեղեցականութեան սէր չունէր եւ նորա կեանքի ընթացքը ամէնեւին համապատասխան չէր հոգեւոր կոչման»: Այս վերջին պարագան անշուշտ նկատի ունի յուշագրող Ռոտինեան, երբ գիտում է Ք. Պատկանեանի մասին. «Մեր հասարակութեան մէջ թէեւ այնքան էլ համակրելի չէր իւր կենցաղավարութեան եղանակով, բայց յարգելի էր իւր ուշիմ ուսանող, աչքաբաց, ընկերասէր եւ մանաւանդ զուարճասէր, որպիսին մնաց մինչեւ վերջը: Միշտ պարտքով ապրելով, երբ փող էր ընկնում ձեռը, մի քանի օրում վատնում էր պարտքեր բաժանելով, դարձեալ դատարկ էր նստում»:

Պետերբուրգից ստացած իր թոշակը խիստ չափաւոր էր, այն եւս՝ անկանոն, որով Քերովբէ Պատկանեան — բայց նաեւ Ռափայէլ Պատկանեան, Պետրոս Սիմէոնեան եւ դորպատեան ուրիշ թոշակառու ուսանողներ — շարունակ հարկադրուած է եղել «պարտքով ապրել»: Եւ կամ, ինչպէս որ Քերովբէի հօրեղբօրորդու՝ դարձեալ Պետերբուրգի հայոց եկեղեցական վարչութեան թոշակառու եւ նորէն դորպատեան ուսանող Ռափայէլ Պատկանեանի մասին է գիտում Ռոտինեան, ստիպուած է եղել նա մշտապէս «մեծ դրկանքի մէջ» լինել:

Եւ որովհետեւ ուսանող Քերովբէ Պատկանեան «Եկեղեցականութեան սէր չունէր», փափաք չէր յայտնարերում հոգեւոր ասպարէզ ընտրելու իրեն համար — իսկ նրան, ինչպէս եւ օտանց ուրիշների, թոշակ տալում էր ա՛յդ նկատումով — այդ պատճառով եւ հասկանալի է, թէ ինչու հարկադրուած է լինում նա ընդհատելու իր ուսման ընթացքը Դորպատում: Եւ ահա մի օր էլ յայտնում է ընկերներին, թէ պիտի վերադառնայ Պետերբուրգ: «Սորա դարձը մեր ուսանողութեանը զգալի կորուստ էր», ասում է Ռոտինեան: «Եւ ինքն ըստ երեւութին ուրախ չէր· պատճառ՝ որ իւր վիճակը իրան անյայտ էր»:

Ընկերները սրտի ցաւով ճանապարհ են գնում նրան «երկու վերստ Դորպատից դէպ ի հիւսիս մի կէս-կայարան, որ գերմաներէն Արտասուաց իջեւան են անուանում»: Այդտեղ «Քերովբէն վերջին անգամ երգեց մեր առջեւ իւր նոր գրած երգը՝ Ղեղբարք ուսանողնե՛ր, ես գնում եմ, մնաք բարեւ,: Եւ հուսացաւ, որ յետոյ ազգիս համար պարծանք դառնար»:

Ու այդ բանի՝ «ազգիս համար պարծանք» դառնալու գաղափարական հիմը Դորպատում դրուեցաւ Քերովբէ Պատկանեանի հոգու մէջ: Իրաւամբ գիտում է Ռոտինեան. «Դորպատեան հոսանքի ոգին եւ եռանդը օր առաջ աշակցեցին (Քեր. Պատկանեանին) ընտրելու այն դերը, որին ծառայելով իւր վրայ գրաւեց ուսեալ ու գիտնականի աշխարհի լուրջ ուշադրութիւնը եւ ժառանգեց փառաւոր անուն»:

14·

Ուսանողի կեանքից եւ մանաւանդ ուսանողական հաւաքոյթներից անբաժան են եղած միշտ էլ երգն ու երաժշտութիւնը, զուարճութիւնն եւ ուրախութիւնը: Առաւել եւս՝ գերման ուսանողի կեանքից: Նա գիտէ «Եղան նման» պարապել, ուսման նուիրուել, բայց գիտէ նաեւ զուարճանալ, ունի ուրախ ժամանցի իր երեկոներն ու օրերը: Եւ ուսանողական երգերը, գարեջուրի բաժակների հետ միասին, հինէն ի վեր ազն ու համեմն են եղել այդ ուրախ ժամանցների: Հատորներ են կազմում գերման ուսանողական երգերը:

Դորպատի հայ ուսանողների վրայ բնականաբար պիտի ազդէր իրենց շրջապատը այդ կողմից եւս: Մերինները նաեւ գիտենք, ունէին իրենց գրական հաւաքոյթները, ուր քննութեան էին առնում լուրջ հարցեր, գոհացում տալիս իրենց հարցասիրական պահանջներին, ծրագիրներ մշակում ապագայ գործունէութեան համար եւ այլն: Բայց

© National Library of Armenia

նրանք ունէին անհոգ հաւաքոյթներ, ուրախ ժամանակներ եւս: Իրենց հերթին, նրանք եւս հնչեցնում էին զուարթ երգեր այդ հաւաքոյթներին ու անում հայ աղջկայ գովքը, փառաբանում էին Հայաստանի գինին ու երգում հայրենիքի վառ կարօտը: Դէորգ Դոդոխեան այդ օրերին ու նման առիթներով է գրի առել իր հռչակաւոր «Ծիծեռնակը», Գէորգ Միրիմանեան՝ իր «Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ» սիրուած երգը եւ ուրիշներ իրենց հերթին՝ նման երգեր ու ոտանաւորներ: Այսպէս, դորպատեան կեանքն է դարձեալ թելադրել Ռափայէլ Պատկանեանին՝ գրել «Բաժակներ առնունք, եղբայր, լիք բաժակներ գինով» ուսանողական ծանօթ երգը, այլ եւ «Եղբարք, խմենք գինի հայ աղջի կենացը» ոտանաւորը, եւ այլն:

Քերովբէ Պատկանեան կենդրոնական դէմք էր Դորպատի հայ ուսանողական հաւաքոյթներին — լինէր գրական հանդիպումների ժամանակ՝ իր լուրջ պատրաստութեամբ ու գիտական հարցասիրութեամբ, թէ ուրախ ժամանցներին՝ իր զուարթ ու ընկերասէր բնաւորութեամբ, զուարճասէր տրամադրութիւններով, բայց նաեւ՝ որպէս յաջողակ երգասաց ու մանաւանդ՝ բանաստեղծական հակումների տէր եւ ոտանաւորներ յօրինելու ընդունակ մի երիտասարդ ուսանող: «Օրինաւոր հայերէն խմանալով», գրում է նրա մասին Ալ· Ռոտինեան իր Դորպատեան Յիշողութիւնների մէջ, «նա մեր գիտցած երգերը բաւարար չհամարելով, մանաւանդ որ մի քանիսը համապատասխան չէին ջահել ոգւոյն, գրեց մի քանի զուարճալի երգեր, որ ինքն ուրախ տրամադրութեան ժամանակ առանձին լիսն ոգեւորութեամբ երգում էր: Նորա երգերից — 'Երբ ծխաքաշս ձեռիս, սենեակումս նստած եմ,', 'Կոամբամբուլին,', 'Ինձ համար չէ դարնան գալը, ինձ համար չէ ծառի ծաղկիլը,', 'Ուսանողաց կեանքից զեղեցիկ կեանք չկայ, եւ այլն, այս բոլորը նորա ուրախ սրտի պտուղներն են: Նրա 'Երբ ծխաքաշս ձեռիս, — խոկապէս կարծես յարմարացրած է իր ջահել աշխարհայեցողութեան»:

Հայ երգարանների դարձն են կազմել, երկար տասնամեակներ շարունակ, Ռափայէլ եւ Քերովբէ Պատկանեանի, Դոդոխեանի, Միրիմանեանի եւ այլ դորպատեանների գրած ուսանողական երգերը: Դրանք մեծ մասով թարգմանութիւններ եւ կամ փոխադրութիւններ են գերմաներէնից, յարմարեցրած՝ հայ կեանքին եւ հայ ուսանողների տրամադրութիւններին: Պարագան նոյնն է նաեւ Քերովբէ Պատկանեանի անունով մեզ հասած երգերի ու ոտանաւորների:

Գամառ-Քաթիպայի «Ազգային Երգարան»ը, լոյս տեսած Պետերմուրգում տակաւին 1856 թ· այսինքն մեր աշխարհիկ գրականութեան մանկութեան օրերին դեռ, իր մէջ պարունակում է մի շարք երգեր ու ոտանաւորներ՝ եղած Քերովբէ Պատկանեանի գրչի տակից: Միք· Միանսարեանի «Քնար Հայկական»ի, ինչպէս նաեւ ուրիշ ծանօթ ու տարածուած երգարանների մէջ եւս մի-մի զարդ են կազմել, երկար, շատ երկար տարիներ, այդ ոտանաւորները: Դրանք երգուել են մինչեւ մեր օրերը, մի քանիսը շարունակում են երգուել եւ այսօր, անծանօթ չեն մինչեւ իսկ նոր սերունդին:

Այսպէս, Քերովբէ Պատկանեանի գրչի տակից են ելած, Դորպատ քաղաքում· 1· «Վերջին վարդ» ոտանաւորը (որ սկսւում է «Վերջին վարդ, վերջին վարդ, սիրականիս վերջին վարդ» բառերով), 2· «Ինձ համար չէ գարնան գալը» ծանօթ երգը, 3· «Ծխախոտի երգը» («Երբ ծխաքաշս ձեռիս...»), 4· «Ուսանող» եւ 5· «Ուսանողի կեանքը» ոտանաւորները (որոնցից առաջինը սկսւում է «Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է, որ միշտ անկախ է», իսկ երկրորդը՝ «Ուսանողի կեանքից զեղեցիկ կեանք չկայ» բառերով), 6· «Կենաց բաժակ»ը («Եղբարք, իմ շուրջ ժողովեցէք...»), 7· «Կոամբամբուլի»ն («Կոամբամբուլին էս էն օղին է...»), 8· «Հայոց Գինի»ն[26], բոլորն էլ՝ ուսանողական ուրախ ժամանցների յատուկ երգեր: Այդ եւ նման երգերն է որ Ալ· Ռոտինեան անուանում է ուսանող Քերովբէ Պատկանեանի «ուրախ սրտի պտուղներ»:

Ք· Պատկանեան Դորպատում գրի է առել եւ ուրիշ ոտանաւորներ, որ մասամբ կամ ամբողջովին տարբեր տրամադրութիւնների արդասիք են: Յիշատակել պէտք են՝ 9· «Մայրիկ իմ աղաւնիկ, լոյս արեգական», 10· «Արանց հետ պատերազմել», 11· «Անտոն» («Մէկ հայ մարդ ունէր գեղեցիկ մի կին...»), 12· «Հին շոր» («Ինձ զի՞ մոռանաս, հին շոր, որին սերել եմ...») ոտանաւորները, վերջապէս 13· «Եղբարք ուսանողներ, ես գնում եմ, մնաք բարեւ»ը, որի մասին խօսք եղաւ վերը, եւ որ գրի է առել Ք· Պատկանեան Դորպատին ու իր ուսումնակից ընկերներին հրաժեշտ տալու առթիւ, երգել անձամբ, վերջին անգամ, նրանց ընկերութեան մէջ: Ինչպէս ասացինք, մեծ մասով դրանք փոխադրութիւններ են գերմանական ուսանողական երգերից, իսկ մի երկուսը՝ ռուսերէնից («Կոամբամբուլին», «Մայրիկ իմ»):

Այս բնոյթն ունին Քերովբէ Պատկանեանի գրչի առաջին փորձերը[27]: Ուրախ, զուարթ երգեր: Շատ տարիներ չանցած՝ գիտական ներհուն միտքը եւ հետաքրքրող ոգին յաղթող հանդիսացան հանդէպ վառվռուն խառնուածքի ու բանաստեղծական հակումների՝ նոյնպէս անձի մէջ: Քերովբէ Պատկանեանի ոտանաւորներն ու երգերը, որչափ եւ փոքրաթիւ ու ոչ բոլորն ինքնուրոյն, անխզելի կերպով կապուած պիտի մնան, ի հարկէ, նրա անուան հետ[28]: Ինչ որ կազմում է սակայն իր բուն իսկ էութիւնը, առանձնայատուկ դիմագիծը հայ մտքի զարգացման պատմութեան մէջ, այդ՝ նրա թողած գիտական-բանասիրական ժառանգութիւնն է, հայագիտական վաստակը: Քերովբէ Պատկանեանի անունը յաւերժօրէն շաղկապուած է հայագիտութեան պատմութեան հետ:

ԴԿՏ· Ա· ԱԲԵՂԵԱՆ

---

[26] «Հայոց Գինի» երգը վերագրողներ կան նաեւ Քրիստափոր Աւագեանի, որ հին դորպատեաններից էր, 1844—1850 թ· հեռուած բժշկական գիտութեանց: Կազանի Համալսարանից էր նա եկած Դորպատ:

[27] Տակաւին Սուրբոգլի գիմնազիայի վերջին դասարանի՝ գրականութիւն նախասիրող աշակերտ, Ք· Պատկանեան գրել է աւարտական շարադրութիւն «Կանտեմիրի» երգիծագրութեան մասին, որ եւ իր ուսուցչի խրախոյսով տպուել է «Սուրբոգլի նահանգական թերթ»ի մէջ (1853, Թիւ 2), գրում է Վեսելովսկի («Բազմավէպ», 1891, էջ 142): Վերջինիս ակնարկով՝ Ք· Պ· Դորպատում եղած ժամանակ թարգմանել է Գեօթէի, Շիլլերի եւ Բերանժէի մի քանի բանաստեղծութիւնները եւս:

[28] «Հիւսիսափայլ»ի 1858 թ· երկրորդ ամսատետրի մէջ (էջ 1—10) Բեստէն ծանկանուան տակ, որ Ք· Պատկանեանինն է, տպագրուած է «Հայաստանի աղջի՛կ» վերնագրով մի չափածոյ գրուածք: Սկսւում է՝

«Մի գեղեցիկ աղջիկ տեսայ Հայաստան,
Որ միայնակ մտն էր գալիս գիշերը»

տողերով: Ունի կէս-պատմական եւ կէս-կենցաղական բովանդակութիւն — Համբարձման վիճակ, հայ գեղջուկ աղջիկներ ու նման տեսարաններ: Մի տեսակ նախնական նմուշը՝ Յովհ· Թումանեանի «Անուշ»ի:

ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԵՒԻԳԻՐՆԵՐ Ի ԲՈՒԼԳԱՐԻԱ

1.

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՍՈՖԻԱՅԻ ՄԷՋ

ԹՈՒՂԹՔ՝ 234 (էջք 467): — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 15·5 × 10: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ 10 × 6·5: — ՏՈՂՔ՝ 19: — ԹԵՐԹՔ՝ 20, իւրաքանչիւրը 12 թուղթ (միայն Ա 9, Դ 10, Զ 11, Թ 11): — ՆԻՒԹ՝ մագաղաթ, մերթ հաստ՝ մերթ բարակ: — ԿԱԶՄ՝ ներսէն լաք՝ դրսէն կաշեպատ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ սկիզբը մէկ հատ, այն ալ կտրուած կամ փրցուած՝ կտոր մը միայն մնացած· ետեւը՝ մէկ հատ ամբողջ եւ երկու հատ ալ փրցուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ գէշ, կազմի կաշեպատ ետեւի մասը պակաս, ամբողջ կազմը քայքայուած, թերթեր կազմէ ելած· փականքի երկաթեայ պահպանակը պակաս, ճարմանդի տեղերը միայն մնացած: — ԳԻՐ՝ հին բոլորգիր, մէկ ձեռքէ, շատ կանոնաւոր ու գեղեցիկ: — ՁԱՐԴԱԳԻՐՔ՝ շատ յանախ, մեծ եւ գեղեցիկ· պրակներու սկզբնագրերը առհասարակ թոչնագիր բազմերանգ (առնուազն չորս գոյնով): — ԽՈՐԱԳԻՐՔ՝ սկզբնատող եւ սկզբնատառ համարներու (Սաղմոսաց) կարմիր եւ մանուշակագոյն. խրատագիրք կամ տեղեկագիրք ամէն սաղմոսի գլուխը՝ կարմիր: — ԽՈՐԱՆ՝ թղ· 2ա բազմագունեան՝ խառն ոսկւով: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ նոյնպէս՝ թղ· 53բ, 85բ, 109բ, 136բ, 161ա, 186բ բոլորն ալ բազմագոյն, խորբերը ոսկի, տերեւաձեւ գարդարուն: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ յանախ, շատ յաջող, բազմերանգ, զանազան ձեւով, ոմանք թոչնագարդ, թղ· 81ա ջահ բոցավառ, բազմագոյն: — ՆԿԱՐ՝ կայ սկիզբը թղ· 1բ, կը ներկայացնէ Դաւիթ թագաւորը՝ տասնաղեայ քնար ի ձեռին· ինքը երկայն պատենաւոր սուր կախած է, գլուխը թագ, դէմքը աւրուած, խոնաւութենէ ներկերն իրար խառնուած· նկարի խորքին մէջ կը տեսնուի եկեղեցաձեւ շէնք մը՝ գուցէ հրէական տաճարը՝ որուն վրայ կան երկու աշտարակաձեւ գմբէթներ՝ իրար միացած վարագուրաձեւ մեծ, կարմիր, ծալածալ լարով մը: — ԴԱՏԱՐԿ՝ միայն թղ· 1ա: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԲ (= 1653), Սեպտեմբեր 8: — ԳՐԻՉ (թերեւս նաեւ ԾԱՂԿՈՂ)՝ Ստեփանոս երէց: — ՏԵՂԻ՝ չկայ յիշատակագրութիւնը թերի մնացած ըլլալուն: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ թղ· 234ա—234բ, թերի մնացած՝ մէկ կամ երկու թերթ պատռած ըլլալով: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Զեռագրիս վերջին ստացիչն է Գաղ Յովհաննէս Շահվէլէտեան, սոֆիաքնակ, որ ստացած է զայն իր հանգուցեալ հօրմէն՝ Յակոբ Շահվէլէտեան, Ամասիացի:

Մատեանս է Սաղմոսարան, *բաժնուած* կանոնագրութիւններու (քանի մը սկիզբներ կիսախորանով) եւ զուարթներու (երբեմն սաղմոսներու թիւը լուսանցքի վրայ նշանակուած): Կանոնագրիսց ծայրերը իրենց համապատասխան Քարոզք եւ Աղօթք համառօտագիր նշանակուած: Սաղմոսներու թուի կարգը պահուած է (Ա—ՃԽԹ): Կը սկսի խորանով մը թղ· 2ա «Երանեալ է այր որ ոչ